

Հ Ր Ա Մ Ա Ն N 15-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ «21» ՀՈՒՆՎԱՐԻ 2019 Թ. ՔԱՂ. ԵՐԵՎԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱԴԱՅՈՂՆԵՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՀԱՏՈՒԿ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐԸ՝ ՑԱՆԿԵՐՆ ՈՒ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՀԱՃԱԽՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քրեակատարողական ծառայության մասին» օրենքի 20-րդ հոդվածով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի 2005 թվականի նոյեմբերի 18-ի «Քրեակատարողական ծառայողի վերապատրաստում և հատուկ ուսուցում անցնելու կարգը հաստատելու մասին» թիվ ՔՀ-67-Ն հրամանով հաստատված N 1 հավելվածի 15-րդ կետը.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության քրեակատարողական ծառայողների 2019 թվականի՝

1) հատուկ ուսուցման դասախոսությունների և գործնական պարապմունքների ցանկը՝ համաձայն [N 1 հավելվածի](#).

2) քրեակատարողական ծառայության գլխավոր խմբի պաշտոններ զբաղեցնող ծառայողների վերապատրաստման դասախոսությունների և գործնական պարապմունքների ցանկը՝ համաձայն [N 2 հավելվածի](#).

3) քրեակատարողական ծառայության անվտանգության ապահովման, պահպանության ապահովման, հատուկ նշանակության, հերթապահության բաժինների և հերթապահ խմբի ծառայողների վերապատրաստման դասախոսությունների և գործնական պարապմունքների ցանկը՝ համաձայն [N 3 հավելվածի](#).

4) քրեակատարողական ծառայության օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող ստորաբաժանումների ծառայողների վերապատրաստման դասախոսությունների և գործնական պարապմունքների ցանկը՝ համաձայն [N 4 հավելվածի](#).

5) քրեակատարողական ծառայության կազմ-վերլուծական, իրավական և միջազգային հարաբերությունների, սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների բաժինների ծառայողների վերապատրաստման դասախոսությունների և գործնական պարապմունքների ցանկը՝ համաձայն [N 5 հավելվածի](#).

6) քրեակատարողական ծառայության կալանավորված անձանց և դատապարտյալների հաշվառման բաժինների ծառայողների վերապատրաստման դասախոսությունների և գործնական պարապմունքների ցանկը՝ համաձայն [N 6 հավելվածի](#).

7) քրեակատարողական ծառայության կադրերի և անձնակազմի հետ տարվող, ինչպես նաև ընդհանուր աշխատանքների բաժինների ծառայողների վերապատրաստման դասախոսությունների և գործնական պարապմունքների ցանկը՝ համաձայն [N 7 հավելվածի](#).

8) քրեակատարողական ծառայության նյութատեխնիկական, տնտեսական և կենցաղային ապահովման բաժինների ծառայողների վերապատրաստման դասախոսությունների և գործնական պարապմունքների ցանկը՝ համաձայն [N 8 հավելվածի](#).

9) հատուկ ուսուցման դասընթացների հաճախման ժամանակացույցը՝ համաձայն [N 9 հավելվածի](#).

10) վերապատրաստման դասընթացների հաճախման ժամանակացույցը՝ համաձայն [N 10 հավելվածի](#):

ԱՐՏԱԿ ՁԵՅՆԱԼՅԱՆ